ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2016թ. N ------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ ՓՈՂՈՑԻ Հ.7 ՇԵՆՔԻ Հ.71 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Աղբյուր Սերոբի փողոցի հ.7 շենքի հ.71 հասցեում գտնվող 143.9 քմ մակերեսով տարածքն (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 24.12.2010թ. հ.2720139 վկայական) անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2021 թվականի մարտի 31-ը ժամկետով տրամադրել Կարեն Եմենջյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

« ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ ՓՈՂՈՑԻ Հ.7 ՇԵՆՔԻ Հ.71 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Աղբյուր Սերոբի փողոցի հ.7 շենքի հ.71 հասցեում գտնվող, քաղաքացի Կարեն Եմենջյանի կողմից զբաղեցված տարածքի նկատմամբ ձևակերպել իր օգտագործման իրավունքը:

Աղբյուր Սերոբի փողոցի հ.7 շենքի հ.71 հասցեում գտնվող տարածքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի հ.604-Ն որոշման հիման վրա Երևանը որպես համայնք ձևավորվելու ժամանակ սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան համայնքին (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2720139 վկայական):

Կարեն Եմենջյանը ավարտել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը, Ռուսաստանի դաշնության Վլադիկովկասի բժշկական ինստիտուտի թերապևտիկ ֆակուլտետը: Վերջինս հանդիսանում է Ամստերդամի <<Ալտերնատիվ բժշկության ակադեմիա>>-ի պրոռեկտոր, Լեհաստանի <<Համալեհական ռադիէստետների միավորման>> պատվավոր անդամ, Տուբինգեմ քաղաքի <<Մարդու հոգեբանական հետազոտությունների ինստիտուտ>>-ի պատվավոր անդամ, խորհրդային տարիներին եղել է <<Կոսմիչեսկիյ գորոդոկ>> պետական միավորման գլխավոր խորհրդատու:

Վերջինս, ապրելով արտերկրում, սերտորեն կապ է պահպանել հայրենիքի հետ՝ մշտապես իրականացնելով հայանպաստ և հայրենիքի շահերից բխող գործունեություն: Նա արտերկրում կազմակերպել է Հայաստանի մշակույթի և պատմության օրեր, հայ ազգային արժեքների ներկայացում, գիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ, ինչպես նաև առողջարարական տարբեր ծրագրեր:

Ներկայումս նշված ոլորտներում իր կողմից իրականացվող ծրագրերն առավել ակտիվացնելու նպատակով նա ժամանել է Հայաստան և նպատակ ունի այս աշխատանքները կազմակերպել և համակարգել Հայաստանից՝ մշտապես բնակություն հաստատելով Երևան քաղաքում:

Հաշվի առնելով նշված գործչի գործունեության ուղղվածությունը և կարևորությունը նպատակահարմար է գտնվել առաջարկել Երևան համայնքի ավագանուն ձևակերպել անհատույց օգտագործման իրավունքը զբաղեցրած տարածքի նկատմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ ՓՈՂՈՑԻ Հ.7 ՇԵՆՔԻ Հ.71 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Աղբյուր Սերոբի փողոցի հ.7 շենքի հ.71 հասցեում գտնվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ ՓՈՂՈՑԻ Հ.7 ՇԵՆՔԻ Հ.71 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Աղբյուր Սերոբի փողոցի հ.7 շենքի հ.71 հասցեում գտնվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ